ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ԵԴ2/1193/02/24

# ՈՐՈՇՈՒՄ

## Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույցներ պահանջելու մասին

21 փետրվարի 2024թ | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ՝ դատավոր Արմենուհի Բաղիրյանի, քննության առնելով ըստ հայցի «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲ ընկերությունն ընդդեմ «Երևանի քաղաքապետարան» ՀՄ-ի՝ թիվ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-24/4 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.02.2024թ. թիվ 3 արձանագրության 1.2 կետով «ԱՎԱԳ ՇԻՆ 1» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշումը անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ նույն արձանագրության 1.3 կետով «ԱՎԱԳ ՇԻՆ 1» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ հարցը,

# ՊԱՐԶԵՑ

«ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲ ընկերությունը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ «Երևանի քաղաքապետարան» ՀՄ-ի՝ խնդրելով անվավեր ճանաչել թիվ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-24/4 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.02.2024թ. թիվ 3 արձանագրության 1.2 կետով «ԱՎԱԳ ՇԻՆ 1» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշումը, և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել նույն արձանագրության 1.3 կետով «ԱՎԱԳ ՇԻՆ 1» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Սույն հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ կետերի համաձայն՝

1. դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Դատարանը գտնում է, որ պատասխանողից անհրաժեշտ է պահանջել թիվ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-24/4 ծածկագրով  ծածկագրով գնման գործընթացի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

*Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 199-200 և 361 հոդվածներով՝ դատարանը*

# ՈՐՈՇԵՑ

1. «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲ ընկերություն ընդդեմ «Երևանի քաղաքապետարան» ՀՄ-ի՝ թիվ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-24/4 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.02.2024թ. թիվ 3 արձանագրության 1.2 կետով «ԱՎԱԳ ՇԻՆ 1» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշումը անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝  նույն արձանագրության 1.3 կետով «ԱՎԱԳ ՇԻՆ 1» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող «Երևանի քաղաքապետարան» ՀՄ-ից պահանջել թիվ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-24/4 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ

գտնվող բոլոր ապացույցները:

Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

**Դատավոր՝** Digitally signed by BADIRYAN ARMENUHI 5707750282 Date: 2024.02.22 20:54:43 AMT **Արմենուհի Բադիրյան**

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*